ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-0010, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ԵՎ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ԵՐԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 2-րդ մասը և ուսումնասիրելով ՀՀ վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը՝ ստորև ներկայացվում է «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 08431895) և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02910767) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշումը.

«ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն մասնակցության հայտեր են ներկայացրել վարչապետի աշխատակազմի կողմից համակարգչային տեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 15.11.2024թ. կայացած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտերում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես.

- «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի հայտում բացակայել է ապրանքի ամբողջական նկարագիրը (ապրանքային նշանը, արտադրող երկրի անվանումը, ֆիրմային անվանումը, մակնիշը և տեխնիկական բնութագիրը):

- «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտում հավելված 1-ում բացակայել է էլեկտրոնային ստորագրությունը, ինչպես նաև ապրանքի ամբողջական նկարագիրը (ապրանքային նշանը, արտադրող երկրի անվանումը, ֆիրմային անվանումը, մակնիշը և տեխնիկական բնութագիրը):

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և ծանուցել - «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին՝ առաջարկելով սահմանված ժամկետում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

05.11.2024թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն՝ ընթացակարգի 2-րդ և 13-րդ չափաբաժինների մասով, իսկ «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն՝ 3-րդ չափաբաժնի մասով սահմանված ժամկետում չեն շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Ուստի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 42-րդ կետը՝ հանձնաժողովը որոշել է «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի հայտերը վերը նշված չափաբաժինների մասով մերժել և առաջարկել պատվիրատուի ղեկավարին «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ի և «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է 2-րդ, 3-րդ, 13-րդ չափաբաժինների մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն:

Միաժամանակ, 20.11.2024թ. պատվիրատուն գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակել է ՎԱ-ՍԱՏՄ-ԷԱՃԱՊՁԲ-25/17 ծածկագրով էլեկտրոնային

աճուրդը 2-րդ, 3-րդ, 13-րդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերության համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա: Նույն մասում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Այսպիսով, Պատվիրատուն արձանագրում է, որ «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ն և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ն իրենց հայտերով ներկայացված փաստաթղթերում արձանագրված

անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելով՝ խախտել են ***գնման գործընթացի շրջանակում իրենց կողմից սպանձնված պարտավորությունը,*** որը հանգեցրել է գնման գործընթացին Ընկերության հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ առկա են «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, և որոշում եմ՝ «ԳԻԳԻՍ ԷԼԵԿՏՐՈՆԻԿՍ» ՍՊԸ-ին և «ԳԱՐԱՆՏ 24» ՍՊԸ-ին ներառել նշված ցուցակում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ

ԳԱՐԻԿ ԲՈՇՅԱՆ